# Մեղրաձոր համայնքի Արտավազ գյուղ

**Բնակչություն՝** 556

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՐՏԱՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Գյուղի ներկայիս անվանումը** - Արտավազ

**Գյուղի պատմական անվանումները** - Թաքառլու

**Գյուղի հիմնադրման ժամանակաշրջանը** - 1950թ.

**Որ համայնքներին է սահմանակից համայնքը** - Մեղրաձոր և Հանքավան

**Գյուղի մակերեսը** - 10638հա

**Հեռավորությունը մայրաքաղաքից** - 65 կմ.

**Բնակչության թիվը** - 556

**Բնակչության կազմը** - հայեր

**Օգտակար հանածոներ** - չկա

**Կրթական հաստատություններ** - 2 միջնակարգ դպրոց

**Մշակութային հաստատություններ** - ակումբ

**Մարզական հաստատություններ** - չկա

**Արտադրական ձեռնարկություններ** - չկա

**Բնակչության հիմնական զբաղմունքը** - գյուղատնտեսություն և անասնապահություն

**Հոգևոր կառույցներ** - Արտավազ վանք 7-րդ դար

**Պատմամշակութային հուշարձաններ** - չկա

**Գյուղի մասին գրքի առկայություն** - չկա

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Նախկինում Թաքյառլու: Գտնվում է Մարմարիկ գետի ափին, Հրազդանից 24 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք: Նախկինում միավորված էր Հանքավանի կաթնաանասնապահական տնտեսության հետ: Ներկայումս իր մեջ ներառում է նաև Փյունիկ բնակավայրը: Մինչև 90-ական թթ. գյուղի բնակիչների հիմնական մասը կազմում էին ադրբեջանցիները: Կլիման առողջարար է, ամառային հանգստի համար օգտակար: Գյուղի դիմաց, Մարմարիկ գետի ձախ ափին կա քանդված եկեղեցի: Մոտակայքում են Արտավազի հին վանքն ու Կարակալա և Ուլաշիկ լքված գյուղերը: Գյուղի տարածքում են գտնվում հանգստյան տներ, ճամբարներ: